ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13 դեկտեմբերի 2018 թվականի № 181-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ՆԱԻՐԻ ԵՎ ՌՈԶԱ» ՍՊ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՆԱԻՐԻ ԵՎ ՌՈԶԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 139-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պետական տուրքի մասով 2 943.9 հազար դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 807.4 հազար դրամ ապառքներ, ինչպես նաև Ընկերությունը սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները: Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-445 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետերով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 03/29.4/2706-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018 թ. նոյեմբերի 9-ի թիվ 139-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը, քննարկելով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի արդյունքները գտավ, որ վարույթը ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից ապառքի մայր գումարն ամողջությամբ մարվել է, ինչը հաստատվում է ընկերության տնօրեն Ն.Դանուղյանի կողմից վարչական վարույթի հանձնաժողովին ներկայացված վճարման անդորրագրերով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

«ՆԱԻՐԻ ԵՎ ՌՈԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 139-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

12/13/2018

X

VERIFIED OCSP 13-Dec-18 19:11:45 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118